ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2026 թվականի N 0471-Ա

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղակա ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք 14^3 հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 1920-Ն 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումների պահանջներով և հիմք ընդունելով Հայաստան Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 12- «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 7 միկրոռեգիոնալ մակարդակի համակցվա տարածական պլանավորման փաստաթղթերի Արարատ համայնքի Ավշար բնակավայրի գլխավոր հատակագիծ հաստատելու մասին» թիվ 114 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 7 միկրոռեգիոնալ մակարդակի համակցվա տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Արարատ համայնքի Ավշար բնակավայրի գլխավոր հատակագծի նախագծի հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխություններ աղյուսակի առաջնահերթ միջոցառումներ ցանկում ընդգրկված Գ-Հ տողի՝ գյուղատնտեսական արոտ առկա նպատակային նշանակության 383.4 հա ընդհանուր մակերեսից 03-013-0561-0128 կադաստրային ծածկագիրը կրող 6.10831 հա-ի նկատմամբ նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության դասին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել Արարատ, Ավշար, 16 հողամաս հասցեն /հասցե տրամադրելու մասին որոշման ծածկագիր 03032MBT7APL/:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

06 մայիսի 2026 թ.
ք. Արարատ